

ՀԱՅՈՑ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԸ

12. ՍԵԼՋՈՒԿ - ԹԱԹԱՐԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Հայ ժողովրդական անուններին զրեթէ ժամանակակից են այն բազմաթիւ անձնանունները, որ հայ ժողովուրդը փոխ է առել թաթար, սելջուկ և նորապարսիկ մահմետական ազգերից: Հայ ժողովուրդը ընդհանրապէս շատ լաւ գիտէր այդ լեզուները, որով շատ զիւրաւ թափանցում էր անձնանուններին ներքին իմաստին և նրանց մէջ տեսած գեղեցիկ պատկերներին հրապուրուած՝ վերցնում ու որդեգրում էր նրանք: Օրինակ՝ Ասլան — առիւծ, Զիլմալի — մատաղ առիւծ, Բահալու — թանկագին, Բայրաւ — դրօշակ, Գուլբաղար — գարնանային վարդ, Գուլդասա — վարդի փունջ, Գուլմելի — վարդերի թագուհի, Գուլնիզար — վարդանկար, Հալսեմալ — ծառայ Աստուծոյ, Հալսեմալար — Աստուծաւ տես, Նար — բաւական է, Թամամ — կատարեալ, Թանգրիլուլի — Աստուծոյ ծառայ, Թուրքանա — նորահաս նուրար, Խուրլումելի — (թաթարերէն) երջանիկ կամ օրհնեալ թագաւոր:

13. ԵՒՐՈՊԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Բոլորովին նոր ժամանակի փոխառութիւններ են սրանք, որ տոնուած են ֆրանսերէնից, իտալերէնից և անգլերէնից. գործածական էին բացառապէս արեւմտահայոց, յատկապէս կաթոլիկ հայոց մէջ, ինչպէս ժողովն կամ ձուգեփո (Յոփսէփ), ձիւան (Յովհաննէս — իտալական ձիովանցի), վալանդին, Ալպեր, Էդուարդ, Վիքորիա, Էօփեն, Վերմին, Անոլին, Ռոսոլին և այլն և այլն: Սրանցից իտալական ձևերը արդէն անհետացան արեւմտահայոց մէջ, իսկ միւսները շատ գործածական չեն այժմ, բացի իգական անուններից, որոնք արականներից աւելի սիրելի են դարձած այն պատճառով որ իգական անձնանունների մի ճոխ մթերք պակասում է արեւմտահայոց մէջ: Վերջին ժամանակներս Կովկաս էլ մուտք գործեցին

եւրոպական անունները, ինչպէս Էմմա, Էլեօնորա (Կրճատ՝ Նորա), Ժուլիէր, Օֆելիա, Վալենդինա, Էդուարդ, Դինէ և իսկ Նարոլեն, Համլեր, Հենրի և այլն:

14. ՌՈՒՍԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Վերջին ժամանակներս զուտ ռուսական անունները սկսել են բազմանալ ռուսահայ աշխարհում (Կովկաս և մանաւանդ Ռուսաստան): Ռուսահայերից ոմանք ռուսական համապատասխան մի անուն փրկւում զանում են իրենց վաղեմի անուն տեղ և այս ձևով էլ գործածում առհասարակ. այսպէս՝ Նիկողոսը դառնում է Նիկոլա, Գեորգը՝ Գեորկի կամ Նեգոր, Յովնան՝ Ենե, Գրիգորը՝ Գրիգորի և այլն:

Այս աշխատանքը այնքան է առաջ գնացած, որ բոլորովին անհամապատասխան անուններ էլ շատ անգամ լծորդում են իրար պաշտօնապէս, բաւական է որ երկու բառերի մէջ նմանահնչուն մի տառ կամ մի ձայն գտնուի: Այսպէս՝ Մկրտիչը դառնում է Նիկիս, Յարութիւնը՝ Արեմ կամ Արեմով, Սահակը՝ Սալա, Մարտիրոսը՝ Մարտին, Վաղարշակը՝ Վոլոդեա, Արեակը՝ Արկադի և այլն, որոնք իրար հետ ո՛չ մի առնչութիւն չունեն ամենեւին: Այս բարուեստի մէջ նշանաւոր են յատկապէս Նորնախիջեանի հայերը:

Առանձնապէս յարգի և սովորական են փաղաքշական անունները, ինչպէս՝ Միքա (Միքայէլ), Սաւա (Աղեքսանդր), Մաւա (Մարիամ), Թոդեա (Թէոդորոս), Լիզա (Եղիսաբէթ), Կոլեա (Նիկողայոս), Կաթեա (Կատարինէ) և այլն:

Նոր ռուսական անուններ են՝ Վլադիմիր, Օլգա, Օլեա, Օլիգկա, Դուսեա, Դուցեա, Մարուսեա և այլն:

15. ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Այս անուն տակ դասաւորում եմ այն հայերէն անձնանունները, որոնք հայկա-

կան ազգային ինքնագիրտակցութեան զարթ-
նումից յետոյ սկսեցին զործածուել մեր
մէջ, այն է վերջին ութսունամեակում:
Այս ազգային ինքնագիրտակցութիւնը, որ
մերթեւոյժ զուտ կրօնական և օտար անուն-
ները, պատմութեան էջերից զուրս բերեց
գրեթէ մոռացուած հայ պատմական անուն-
ները և նրանց ընդհանուր զործածութեան
գրեց. չքաւականացաւ միայն զբանցով և
սկսեց ստեղծել յատուկ անուններ, բոլորն
էլ զուտ հայերէն լեզուով և հայ ազգային
զազափարներով շրջանակում:

Ահաւասակ այսպիսի նոր անուններ
մի փոքր ցանկ. — Հայաստան, Արախի,
Մասիս, Արարատ, Արմենուհի, Հայկունի,
Ազատ, Սիրանուշ, Վարսանուշ, Հրանուշ,
Հրազդան, Հրայր, Հրաչունի, Բերկունի,
Վեսիկ, Մարտիկ, (ոչ թէ Մարտիրոս բառից
կրճատուած, այլ հայերէն մարտիկ [կռուղ]),
Հայկազն, Հայկարամ, Աղանի, Արծուիկ,
Յասմիկ, Բնարիկ, Արփենիկ, Ազնիւ, Սիրա-
կան, Լուսիկ, Լուսերազ, Գեղունի, Ազա-
սունի, Փայլակ և այլն:

Անունները կախում ունեն նաև տե-
ղից ու հանգամանքից: Հայութեան բոլոր
հատուածները, թէ՛ Հայաստանում և թէ՛
զաղթավայրերում, միշտ միակ տիրապե-
տութեան հպատակ չեն եղել և հետևա-
բար մի ազդեցութեան չէին ենթարկուած:
Պահաւական անունները կարող էին Հա-
յաստանի արեւելեան մասերում տարած-
ուած լինել, մինչ յունական անունները՝
աւելի արեւմտեան մասերում, իսկ ասո-
րական անունները՝ հարաւային մասե-
րում: Տեղական զանազանութիւնը աւելի
որոշ է ներկայումս. Կովկասի հայերը զործ
են ածում ռուսական անուններ, որոնցից
ոչ մէկը չէ մտած արեւմտեան Հայաստան
և զաղութները: Հունգարիայի, Լեհաստանի
և Ռումանիայի հայերը բնականաբար ունեն
հունգարական, լեհական և ռումանական
անուններ, որոնք մեր մէջ իսպառ մուտք
չեն գործած:

Հանդամանքներն էլ մեծ ազդեցու-
թիւն ունեն անունների տարածման վրայ
— բարձր դասակարգը, իրեն նորութեան
ու փայլի սիրահար, սովորաբար հինն ու
բնիկը չուտ է մոռանում, օտար անունները
աւելի է սիրում և նրանց առաջին փոխա-
նուն է, մինչդեռ հասարակ ժողովուրդը

իր ունեցածին աւելի հաւատարիմ է: Պահ-
ւական անունները առաջին անգամ ազ-
նուական դասակարգի մէջ մտան. թագա-
ւորները, իշխաններն ու նախարարները
սիրում էին կոչուել Արչակունի ու Սա-
սանեան արքայական աների անուններով:
Ասորական, երբայական և յունական ա-
նունները կրօնական դասակարգի մէջ մուտք
զործեցին նախապէս և նրա միջոցով տա-
րածուեցին ժողովրդի մէջ: Դրա համար է
որ երբ մէկը ընդունում է կրօնական կո-
չում, նրա աշխարհական անունը (մանա-
ւանդ եթէ հեթանոսական է) հանում են և
տեղը դնում կրօնական անուն, որ լինում
է յունական, երբայական կամ ասորական:
Այսպէս՝ երբ Տրդատ թողեց արքայական
գահը և ճգնաւոր դարձաւ, կոչուեց Յով-
հաննէս: Ռուբինեանց Հեթում սպարապետը
երբ թողեց սուրը և վաճաք մտաւ, կոչուեց
Անտոն: Այս սովորութիւնը շարունակում
է մինչև հիմա: Հայ ազգային անունները
զյխաւորապէս կոստանդնուպոլսում հնար-
ուեցին և կամաց կամաց դէպի արեւելք
տարածուեցին: Երբ ես ծնուեցի (Կոստանդ-
նուպոլիս, 1876 թ.) կարծեմ երկրորդն էի
որ Հրաչեայ անունն օտացայ. մինչդեռ
այժմ Հրաչեայ անունը սովորական է դար-
ձել: Եթէ զնանք մի խուլ գիւղ, մեր լսած
սովորական անունները պիտի լինեն երբա-
յական, յունական և թրքական անուն-
ները. իսկ բուն հայկական, պահաւական,
երոպական, ռուսական և հայ ազգային
անունները՝ հազիւ երբեք: Մինչդեռ Կոս-
տանդնուպոլիս, Երևան և ուրիշ կրթուած
կեդրոններ (Թիֆլիս, Զմիւռնիա), առա-
ջիններն արդէն անգործածական են դարձել
և աւելի այս վերջինները զոյւթ թիւն ունեն:

Անունը այն միջոցն է որով հասարա-
կութեան մի անդամը (անհատը) զանազան-
ւում է մնացեալ անդամներից: Ամէն անուն
մի բառ է, որ ունի իր որոշ նշանակու-
թիւնը: Անունները յաճախ ազգից ազգ
փոխ են առնում և ընդհանրանում: Հա-
յերը թէև ունեն իրենց բնիկ սեփական ա-
նունները, բայց զբանք շատ քիչ են: Մեր
զործածած անունները մեծաւ մասամբ օ-
տար են. պահաւերէն, պարսկերէն յու-
նարէն, երբայերէն, թուրքերէն և զանա-
զան եւրոպական լեզուներով, որոնց մէջ
գնում ենք նաև ռուսերէն անունները:

Այժմ խօսում եմ ազգանունների մասին:

Երբ համայնքը փոքր է: անունը բաւական է անհատը համայնքի մեացնելու անդամներից զանազանելու համար: Օրինակ, մի գիւղում ուր 10-20-30 տնտես միայն կայ, երկու սեռը բաժանելով՝ նրա կէտի չափ միայն տղամարդ և այնքան էլ կին պիտի լինի: Ուստի եթէ մի 100 անուն լինի, այդ թիւը բաւական է. ամէն մարդ էլ կ'իմանայ թէ ո՞վ է կարագետը կամ ո՞վ է Գրիգորը:

Բայց երբ համայնքը մեծանում է, տների թիւը բարձրանում է հարիւրների և հազարների, այն սակաւաթիւ անունները այլևս բաւական չեն: Ուստի կա՛մ պէտք է անունների թիւը շատացնեն, ինչ որ անում են, և կա՛մ անուններին պիտի աւելացնեն զանազանիչ մի երկրորդ միջոց: Զարգացման այս առաջին աստիճանը կազմում է ածականը: Անունը վրայ դնում են մի ածական: Վերջում են նոյն անհատի արտաքին կամ ներքին նկարագրից յատկանշական որեւէ կէտ: Օրինակ. Հոսովմայեցւոց ինքնակալներից մէկը կոչւում էր Յուլիոս. սա մի սովորական անուն էր Հոսովմայեցւոց մէջ. կային շատ Յուլիոսներ. ուստի այս Յուլիոսը միւս Յուլիոսներից զանազանելու համար կոչեցին Յուլիոս Կեսար: — Ի՞նչ է նշանակում Կեսար. — Կեսար նշանակում է փորը ճղած: Երբ Յուլիոսի մայրը երկուսքի մէջ էր, ծնունդը շատ դժուար եղաւ. բժիշկները ստիպուեցին ճղել մօր փորը և երիտաշին այնպէս դուրս բերել. Յուլիոսը կոչուեց փորը ճղած Յուլիոս: Այնուհետեւ Յուլիոս Կեսարը մի մեծ ինքնակալ դարձաւ և նրա Կեսար վերադիրը նշանակեց «մեծ ինքնակալ». այս է կայսր բառը:

Ածականով անուններ շատ սովորական են թէ՛ պատմութեան և թէ՛ մեր հասարակ կեանքի մէջ. օրինակ՝ Լեւկ-Թիմուր (կաղ Թիմուր), Իվան Գրոզնի (Իվան Ահեղ), Աւոս Ողորմած, Գալլ Վահան, Գոլ Վասիլ, Գիլի Ամրամ, Քոռ Թաքոս, Զօլախ Սարգիս, Փալարա Մարտին, Հապրանի Գորդի ևն:

Ածականներից յետոյ կարելի է գնել անհատի տեղը, ծնած կամ բնակած քաղաքը. այսպէս՝ ունենք Գրիգոր Նախկացի, Գրիգոր Տաթևացի, Մովսէս Խոնեացի,

Խաչատուր Տառնացի, Գեորգ Սկեռացի, Ներսէս Լամբրոնացի և այլն:

Երրորդ միջոցն է հայրանուն գործածութիւնը. այսպէս՝ Գրիգոր որդի Յովնանու, Տրդատ որդի Խոսրովու, Միքայ որդի Աւոսի: Թուրքերի մէջ՝ Հիւսէյին օղլի Ալի, Ալի օղլի Սուլէյման և այլն: Արաբների մէջ՝ Հասան իպնի Ալի, Ալի իպնի Վեհապի, Մեհմեմէս իպնի Սուլէյման: Ամենքիս յայտնի է ուսաց մէջ ընդունուած սովորութիւնը, հայրանունը իրրեւ պատուանուն. — Նիկոլա Ալեքսանդրովիչ, վլադիմիր Սեբեդևիչ, իզականի մէջ՝ Աննա Գրիգորիւնա, Սեֆիա Գեորգիւնովնա և այլն:

Այս երեք միջոցներն էլ կարող ենք կոչել անհատական կամ աւելի ըստ՝ մականուն, քան թէ ազգանուն: Ազգանունը այն է որ գրւում է մի գերդաստանի ամբողջ սերնդի կամ սերունդների վրայ և կարող է դարէց դար շարունակուել: Այսպէս՝ Մամիկոնեան, Բագրատունի, Արմուր, Գնունի, Սկլունի, Խորխոռունի, Հաւնունի, Զիւնական և այլն և այլն, հին հայոց նախարական տոհմերը, որոնք շարունակուել են երկար դարեր և արարական շրջանում հետզհետէ վերջացել:

Կան ազգեր, որոնք հայրանունան վրայ կանգնում են և ազգանունան չեն անցնում. այսպէս էին թուրքերը և պարսիկները. որոնք գիտէին միայն Հիւսէյին օղլի Ալի կամ Հուսէյին Հուսեյի Ալի. և միայն վերջին քսանամեակում, հետեւելով եւրոպական կարգերին, անցան ազգանունան: 1918 թւականին էր որ Պարսից կառավարութիւնը յայտարարեց թէ այսուհետեւ արաղսները պիտի ջնջուեն և ամէն մարդ իրեն համար մի ազգանուն պիտի ընտրէ: Ամէն մարդ ընկաւ մտածողութեան խորը և մի օրեւ տեղից մի բան հնարեց և թերթում յայտարարեց թէ ես այսինչ ազգանունն եմ վերցնում: Այլևս ոչ ոք այդ ազգանունը վերցնելու իրաւունք չունէր: Երկու տարի, տեւեց այդ գործողութիւնը և ամէն ընտանիք կամ գերդաստան տարբեր ազգանունան տէր դարձաւ:

Արաբներն էլ կանգնել են հայրանունան վրայ և որովհետեւ միայն հայրանունը քիչ էր զանազանելու համար համայնքի զանազան անդամները իրարից, աւելացրին

նրա հետ նաև մի մականունն և այն անձի
մի տեղացի լինելը։ Արաքների մէջ կայ
նաև մի ուրիշ տարբերակ սովորութիւն,
որ միայն արաքներին է յատուկ։ Ենթա-
դրենք մի մարդ Հասան անունով, սա են-
թադրենք թէ Հիւսէյինի որդին է, ուստի
լինում է Հասան-իւպին-Հիւսէյին։ Նա ա-
սենք Բազդադ քաղաքից է, ուստի լինում
է Հասան-իւպին-Հիւսէյին-էլ-Բազդատի։
Նա ունի մի մականուն, ենթադրենք Ֆաթ-
թահ։ ամբողջը լինում է Հասան-իւպին-
Հիւսէյին-էլ-Բազդատի-Ֆաթթահ։ Բայց
այսքանը քիչ է. նա ամուսնացաւ, ունե-
ցաւ մի որդի Ալի անունով։ Հայրը այժմ
իր վրայ է վերցնում ապու-Ալի, այսինքն
Հայր Ալիի տիտղոսը և դառնում է Հա-
սան-իւպին-Հիւսէյին-էլ-Բազդադի-ապու-
Ալի-Ֆաթթահ։ Որդիները շատացան. նա ու-
նեցաւ երկու որդի ևս, մէկը Մուսթաֆա և
միւրը Սեւէյման։ Ուստի այդ մարդը դար-
ձաւ՝ Հասան-իւպին-Հիւսէյին-էլ-Բազդադի-
ապու-Ալի-ապու-Մուսթաֆա-ապու-Սեւ-
էյման-Ֆաթթահ։ Արաք պատմութեան և
գրականութեան մէջ շատ ենք պատահում
այսպիսի կանգունաչափ անունների. օրի-
նակ՝ մի բանաստեղծ կայ, որի անունն է՝
Իզդէզ-զին-ապու-Ֆատա-էլ-ապու-
Վահապ-Ամադ-էզ-զին-իւպին-Իբրահիմ-
էլ-Սենճանի։ Եզդիպտոսի սուլթաններից
մէկի քարտուղարն է Շէյխ-ար-Ռայիս-
Սաֆի-ադ-Դամլա-իւպին-ապու-Մաւլի-
իւպին-Շարաֆի։ Արաք ուղեգրներից մէկը
կուսում է Ապու-Աբտալիահ-Մուհամմէդ-
իւպին-Արդուլա-իւպին-Մուհամմէդ-իւպին-Իբ-
րահիմ-էլ-Վաթի-էզ-Դանի-իւպին-Բատու-
տա-Նեմմէդ-Դին։ Մի արաք բժիշկ կայ,
որի անունն է Զրա-էզ-Դին-ապու-Մուհամ-
մէդ-Արդալահ-բին-Ահմէդ-էն-Նուրաթի-
էլ-Մալաքի։ Արաք պատմիչ Իպին-Սալի-
քանը իր Վէֆայ-էլ-Այա-զրքում (թրգմ.
Գ. Մարիան, Գահիրէ, 1335, էջ 8), այս-
պէս է անուանում խորասանի էմիրներից
մէկի անունը. — Էլ-էմիր-Կուլթէյրա-բին
արի-Սալիհ-Մուսլիմ-բին-Ամր-բին-էլ-Հու-
սէյն-բին-Ռարիա-բին-Սալիդ-բին-Էսիդ-էլ
Խէյր-բին-Կուդայի-բին-Հիւալ-բին-Սալա-
մա-բին-Սալարա-բին-Վալի-բին-Մահ-
բին-Մալիք-բին-Ասսար-բին-Սադադ-բին-
կայս Ալլան-բին-Մոդար-բին-Նիզար-բին-
Մադդ-բին-Ահման-էլ-Բահիլի։ Սա այդ

մարդու ամբողջ ցեղաբանութիւնն է, Իրն-
Սալիքանը մի ուրիշ անգամ էլ տալիս է
մի իշխանի երկար անունը և յետոյ էլ ա-
ւելացնում է. «Մնացեալը հեմ յիշում»։
Դժբախտաբար ես էլ էջը հեմ յիշում։

Հայրանունները կարող են կրկնուել,
այսինքն զինել պապի և պապի հօր, գուցէ
և պապի պապի անունը։

Արաքական սովորութիւնը քիչ-քիչ
կամ մասամբ տարածուեց հպատակ կամ
կրօնակից ցեղերի վրայ. օրինակ՝ Մադա-
կառգարի թագաւորներից մէկը կուսում է
Անդրիանապոլիսի բերնա։ Իսպանացիք էլ
սիրում են կազմել երկար անուններ։ Մի
սուալ կայ։ Հարաւային ամերիկայում մի
խաղանքի զիշերը անտառում կորցրել է
ճանապարհը. ստիպուած թափում է մի
անդլիացու դուռը և խնդրում է որ իրեն
թոյլ տայ զիշերել. անգլիացին մութ տեղը
պատահա՛նք բաց արած հարցնում է մի
— Ֆերմանդո-Դելլու-Վեսդու-Սերվանդես-
Դելլու-Մինկու-Սանրա-Կուզենո-Դելլու-
Անիլոնոս։ — Մեր տունը փոքր է, այդ-
քան մարդու տեղ չկա, — ասում է անգ-
լիացին և պատահա՛նք փախում։

Ուրիշ ազգեր ճանաչում են անուն,
հայրանուն և ազգանուն. օրինակ՝ չինա-
ցիք. որոնց բառերը շատ կարճ են, հետե-
ւում են այս սովորութեան. յիշենք չի-
նական անուններից՝ Կոն Ֆու-Յե, Լի Հուեզ-
Անգ, Սու Յան-Յե, Շի Հուանկ-բի, Շու Յու-
Յու-Յու և այլն։ Արանց մէջ առաջին
վանկը ազգանունն է, երկրորդը՝ հայրա-
նունը և երրորդը՝ անունը։ Թուսաց մէջ
էլ, ինչպէս յայտնի է, զօրժածական է ա-
նունով և հայրանունով ազգանունը. օրի-
նակ՝ Իվան Ֆեոդորովիչ Պալիեւ և այլն։

ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌԵԱՆ

(Նոր-նորէ՛ 3)

